ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԱՆՏԱՌԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Պարոն Ա. Նալբանդյանին

19 դեկտեմբեր 2016թ

Թիվ 112

Պարոն մարզպետ

Անտառամուտի համայնքապետարանից Ձեզ ենք ներկայացնում համայնքի ավագանու թիվ 49 Ա օրակարգը և 50Ա,51Ա, և 52Ա որոշումները ։

Անտառամուտ համայնքի ղեկավար՝ Ա.Գևորգյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Անտառամուտ համայնք
հեռ. 093917275

### ՈՐՈՇՈՒՄ

### 16 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2016թ N 49 Ա

### ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016թ-ի ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով՝ ավագանին որոշում է.

Հաստատել Անտառամուտ համայնքի ավագանու 2016թ-ի դեկտեմբերի 16-ի նիստի օրակարգը

ՕՐԱԿԱՐԳ

1.Համայնքի գույքը << ջրամատակարարման բախշիչ ցանցը >> անհատույց հանձնել <Լոռի ջրմուղ կոյուղի > ՓԲԸ-ին

2.Համայնքի վարչական տարածքում գտնվող հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին

3.Հարազատին կորցրած/մահացած/ ընտանիքին դրամական օգնություն հատկացնելու մասին :

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Վարդան Գևորգյան | | | |
| Ալվարդ Ավետիքյան | | | |
| Արմեն Գևորգյան | | | |
| Խաչիկ Ավետիքյան | | | |
| | | | |

Անտառամուտ համայնքի ղեկավար՝ Ա.Գևորգյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Անտառամուտ համայնք
հեռ. 093917275

## ՈՐՈՇՈՒՄ

16 դեկտեմբեր 2016թ N 50-Ա

### << ԼՈՌԻՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ >>ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով << Իրավական ակտերի մասին >> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1 մասով << ՏԻՄ մասին >> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով ինչպես նաև համաձայն ՀՀ կառավարության 2011թ դեկտեմբերի 22-ի << Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին >> թիվ 1851-Ն որոշման.

Անտառամուտ համայնքի ավագանին որոշում է

1.Անտառամուտ համայնքի սեփականության իրավունքով հանդիսացող 3կմ երկարությամբ,80մմ միջին տրամագծով երկաթյա խողովակով ջրամատակարարման բախշիչ ցանցը անհատույց հանձնել << Լոռիջրմուղկոյուղի >> ՓԲԸ-ին :

2.Գույքի գտնվելու վայրն է՝ ՀՀ ԼՄ Անտառամուտ համայնք :

3.Ուժը կորցրած ճանաչել 23.05.2016թ թիվ 19 Ա որոշումը :

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ՝ | Դեմ՝ | Ձեռնպահ՝ |
|---|---|---|---|
| Վարդան Գևորգյան | | | |

| | | | |
|---|---|---|---|
| Ալվարդ Ավետիքյան | | | |
| Արմեն Գևորգյան | | | |
| Խաչիկ Ավետիքյան | | | |

Անտառամուտ համայնքի ղեկավար Ա.Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

# ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

“ 16 “ Դեկտեմբեր 2016 թ. թիվ 51 Ա

---

## ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 07.12.2016թ, թիվ 97 դրական [illegible] համայնքի ավագանին

## ՈՐՈՇՈՒՄ Է

1. Լոռու մարզի Անտառամուտ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.1063 հեկտար գյուղատնտեսական նշանակության արոտավայր /կադաստրային ծածկագիր՝ 06-015-0102-0001/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ կոմունալ օբյեկտների հողերի գործառնական նշանակության:
2. Առաջարկել համայնքի ղեկավար Ա.Գևորգյանին ապահովել իրավունքների պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում և համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն:

| | | | |
|---|---|---|---|
| Ավագանու անդամներ՝ | կողմ | դեմ | ձեռնպահ |
| Ա.Ավետիքյան | | | |
| Վ.Գևորգյան | | | |
| Խ.Ավետիքյան | | | |

Անտառամուտ համայնքի ղեկավար՝ Ա.Գևորգյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԱՆՏԱՌԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Անտառամուտ համայնք,

Հեռախոս՝ 093-91-72-75

Էլ.Փոստ՝ Antaramut.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 16 » դեկտեմբեր 2016 թվականի N 52 Ա

## ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Անտառամուտ համայնքի ղեկավարին վերապահված կամովի լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 22 Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, նորածին երեխաների սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու եզրակացությունները՝

Անտառամուտ համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչ՝ Հայկ Գևորգյանի դիմումը և համայնքի բյուջեից նրան հատկացնել դրամական օգնություն՝ հուղարկավորությունից հետո հետագա ծախսերը հոգալու համար համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշման ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակչին վճարել հատկացված գումարը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Ալվարդ Ավետիքյան | | | |
| Խաչիկ Ավետիքյան | | | |
| Արմեն Գևորգյան | | | |
| Վարդան Գևորգյան | | | |
| | | | |

Անտառամուտ համայնքի ղեկավար՝ Ա.Գևորգյան